# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 նոյեմբերի 2017թվականի N 940*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Սուսաննա Ներսիսյանի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Մնացական Ներսիսյանին /ներկայումս հանգուցյալ, մահվան վերաբերյալ ակտի գրանցում N175, տրված՝ 1996 թվականի հունիսի 11-ին/սեփականության իրավունքով պատկանող/տեխնիկական անձնագիր՝ տրված՝ ՀՍՍՀ Հրազդանի տեխնիկական գույքագրման բյուրոյի կողմից 1987 թվականի ապրիլի 25-ին/ Հրազդան քաղաքի Աթարբեկյան թաղամաս 511 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 511:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2017թվականի N 941

## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՆԱՏՈՒՐ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՄԱՍԻ, ԿԻՍԱՆԿՈՒՂԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՄԱՍԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ, ՀԵՆԱՊԱՏԻ, ՊԱՐԻՍՊԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԻՏԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Ռիտա Սերյոժայի Գրիգորյանի /Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, ծնված՝ 1956 թվականի հունիսի 11-ին/լիազոր անձ Վարդգես Մարտիրոսյանի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 29-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյանում՝ 2024, ՀԽՍՀ Հրազդանի տեխնիկական գույքագրման բյուրոյի կողմից 1990 թվականի հունիսի 22-ին տրված բնակելի տան տեխնիկական անձնագիրը և համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, եզրակացությունը՝ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող 953.5 քմ մակերեսով հողամասը պատկանում է Ռիտա Գրիգորյանին.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վերականգնել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող Ռիտա Գրիգորյանին պատկանող 953.5քմ մակերեսով օրինական հողամասի նկատմամբ Ռիտա Գրիգորյանի սեփականության իրավունքը:

2.Հողամասի սահմանները որոշվում են «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող Ռիտա Գրիգորյանին պատկանող հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցած 22.10քմ արտաքին մակերեսով մասը, կիսանկուղի ինքնակամ կառուցած 2.58քմ արտաքին մակերեսով մասը, ինքնակամ կառուցած 23.56քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 36.94քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 2.19քմ մակերեսով հենապատը, 2.55քմ մակերեսով պարիսպը և բնակելի տան ինքնակամ բացած 4 պատուհանները:
4.Բնակելի տան ինքնակամ կառուցած մասը, կիսանկուղի ինքնակամ կառուցած մասը, ինքնակամ կառուցած օժանդակ շինությունը, անասնաշենքը, հենապատը, պարիսպը և 4 պատուհանները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը , օրինականացման համար նախատեսված վճարներ չի գանձվում:
5.Բնակելի տան ինքնակամ կառուցած մասը, կիսանկուղի ինքնակամ կառուցած մասը, ինքնակամ կառուցած օժանդակ շինությունը, անասնաշենքը, հենապատը, պարիսպը և 4 պատուհանները համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
6.Ռիտա Գրիգորյանին պատկանող բնակելի տանը՝ օժանդակ շինություններով, դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով տրամադրել նոր հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 82/1:
7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Ռիտա Գրիգորյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան, օժանդակ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 նոյեմբերի 2017թվականի N 942*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 20.0քմ մակերեսով 0454-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 33/11:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 նոյեմբերի 2017թվականի N 943*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության սնանկության գործերով կառավարիչ Հարութ Ղարիբյանի 2017 թվականի հոկտեմբերի 31 -ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության սնանկության գործերով կառավարիչ Հարութ Ղարիբյանի կողմից ներկայացված /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1776173, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 16-ին/ Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Աշոտ Երկաթի փողոց, 3-րդ նրբանցք 14:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 նոյեմբերի 2017թվականի N 944*

*ՋԱՆԻԲԵԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Ջանիբեկ Պետրոսյանի 2017 թվականի նոյեմբերի 2-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝</u>*

*1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 132 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Ջանիբեկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող / անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝ N 30052012-07-0127, N 02112017-07-0031, գաղտնաբառ՝ 2XQBUKJ1PKY6 և N30102017-07-0019, գաղտնաբառ՝ 3A6SMF7VQH6E/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 129/3, 129/4 և 129/5 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 129/3:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*06 նոյեմբերի 2017թվականի N 945*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 3-Ա որոշումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագծերը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2017 թվականի նոյեմբերի 01-ի թիվ 26 մասնագիտական եզրակացությունը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 53 շենքի թիվ 18 բնակարանի բնակիչ Իշխան Վլասյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 9/4 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 21.83քմ ընդհանուր մակերեսով հողամասում 21.83քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 նոյեմբերի 2017թվականի N 946*

## *ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 623 հոդվածի, հիմք ընդունելով վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

*1. Լուծել Հրազդան համայնքի ղեկավարի և անհատ ձեռներեց Կաղեն Միրզաբեկյանի միջև կնքված 2013 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 4 վարձակալության պայմանագիրը:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 նոյեմբերի 2017թվականի N 947*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ ՝*

*1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 20.0քմ մակերեսով 0454-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 43/41:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*08 նոյեմբերի 2017թվականի N 948*

### *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հարութիկ Մարտիրոսյանի 2017 թվականի նոյեմբերի 3-ի դիմումը.*

### *Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 21 տան բնակիչ Հարութիկ Մարտիրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1999793, տրված՝ 2005 թվականի նոյեմբերի 30-ին/ Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Շահումյան փողոց 21/1:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 նոյեմբերի 2017թվականի N 949*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2.35 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Հրազդանի համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N111 դրական եզրակացությունը, Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N100 որոշումը․*

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>՝*

*1․Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ Հարավային թաղամասի Երևան-Սևան մայրուղուն հարող տարածքում համայնքային սեփականություն համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N06022017-07-0037, ծածկագիր՝ SVSLUGWTNGWI) 2.35հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայրերից 0.4865հա մակերեսով և վարելահողերից 1.8635հա մակերեսով, հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:*

*2․Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N06022017-07-0037, ծածկագիր՝ SVSLUGWTNGWI) Հրազդան քաղաքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Երևան-Սևան մայրուղի 8:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ